Հասցեատեր՝

ԲԿՄԱ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ bkmayerevan@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29.09.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան

Վարույթ՝	ԱԽ-051
Խախտում՝	1. Ակումբի ներկայացուցչի՝ նախախաղային խորհրդակցությանը ուշանալը (Հավելված 1Ա, 35-րդ կետ) 2. Թիմի պահեստային մարզահագուստ չունենալը (Հավելված 1Ա, 76-րդ կետ) 3. Թիմի ֆուտբոլիստ Արմեն Սարգսյանի (27307) կողմից մրցակցին անհարգալից կերպով մարզադաշտից դուրս հանելը և վերջինիս հարվածելը (Հավելված 1Բ, 17-րդ կետ)
Առաջնություն՝	2023-2024 Հայաստանի Առաջին Խումբ
Խաղ՝	«Շիրակ-2»-«ԲԿՄԱ-2» (1:0), 23.09.2023թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Ակումբի ներկայացուցչի՝ նախախաղային խորհրդակցությանը ուշանալու համար ԲԿՄԱ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
2. Թիմի պահեստային մարզահագուստ չունենալու համար ԲԿՄԱ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
3. Առաջնորդվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 22-րդ հոդվածի 1-ին կետով՝ թիմի ֆուտբոլիստ Արմեն Սարգսյանի (27307) կողմից մրցակցին անհարգալից կերպով մարզադաշտից դուրս հանելու, հարվածելու համար վերջինիս որակազրկել (2) երկու խաղով և ԲԿՄԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի մեկհարյուրապատիկի՝ 100(000 ՀՀ դրամի չափով: Որակազրկումը տարածվում է 2023 թվականի սեպտեմբերի 23-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում):

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- Եթե Ֆուտբոլային սուբյեկտի կողմից պատասխանատվության միջոցի պայմանական կիրառման ընթացքում թույլ է տրվում համանման կարգապահական խախտում, ապա ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցը կիրառվում է: Միևնույն ժամանակ այդ կարգապահական միջոցը զումարվում է նոր կատարված կարգապահական խախտման հետևանքով կիրառվող միջոցին:
- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:

- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: